

Մամակ: Հայաստան թուրքերեն լրագիր: Կահիրե, 1898 թ.: Ն. Գառազյանի աշխատության համարում է հայերեն հրատարակություն³⁵, մինչդեռ «Մամակ»-ը եղել է «տանկարարան», ինչպես նշված է 1898 թվակիր արխիվային մի վավերագրում³⁶: Նրբ է հիմնադրվել «Մամակ»-ը Այդ հարցին բավական պարզ պատասխան է տալիս արխիվային մի ուրիշ վավերագիր (1898 մարտի 22 թվակիր), որտեղ ասված է. «...լրագիրն... ըստ 2 թիվ ելած է»³⁷: Մինչև նույն թվականի մայիսի 26-ը «Մամակ»-ը լույս էր տեսել 25 համար³⁸: Այդ հաղորդումներից կարող ենք հետևել, որ «Մամակ»-ը հիմնադրվել է 1898 թ. մարտի կեսերին և եղել է, հավանաբար, եռօրյա լրագիր:

The Egyptian graphic: Կահիրե, 1902 թ.: Խմբագիր՝ Տիրան Փելեկյան, հրատարակիչ՝ Գ. Գալֆայան:

The Cairo Weekly: Կահիրե, 1903 թ.: Խմբագիր՝ Տիրան Փելեկյան, հրատարակիչ՝ Գ. Գալֆայան:

The Sphinx: Կահիրե, 1913 թ.: Խմբագիր՝ Ալեքսանդր Պեդրոշյան:

Politique Morale: Հանգես: Կահիրե, 1867—1868 թթ.: Խմբագիր՝ Եսալ Անշալյան:

La Justice: Կահիրե, 1908 թ.: Խմբագիր և հրատարակիչ՝ Լեոն Ֆեհմի:

La Caravane: Երգիծական պատկերազարդ շաբաթաթերթ, 1938 թ.: Կահիրե, հրատարակիչ-խմբագիր՝ Ալ. Ռաբոխան:

Յեկի ֆեբ: Թուրքերեն լիզվով ամսագիր՝ Կահիրե, 1903 կամ 1904 թթ.: Խմբագիր՝ Տիրան Փելեկյան, Բաժանվում էր ձրի:

Հ. ԹՈՓՈՒՋՅԱՆ

ՀԱՅ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Նոյեմբերին լվովում կայացավ հայ-ուկրաինական պատմական կապերին նվիրված գիտական կոնֆերանս, որը կազմակերպել էին Ուկր. ՍՍՀ լվովի կենտրոնական պետական պատմական արխիվը, լվովի Ի. Ֆրանկոյի անվան Լեոնին շքանշանակիր պետական համալսարանի հասարակագիտական ինստիտուտը և Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը:

Կոնֆերանսը բացեց Ուկրաինական ՍՍՀ լվովի կենտրոնական պետական պատմական արխիվի գիրեկտոր Ն. Ֆ. Վրադին: Այնուհետև կոնֆերանսի մասնակիցներին ողջունեցին Ուկրաինայի կոմկուսի լվովի մարզկոմի բաժնի վարիչի տեղակալ Պ. Պ. Պանչենկոն, լվովի Ի. Ֆրանկոյի անվան համալսարանի հասարակագիտական ինստիտուտի գիրեկտոր Մ. Մ. Օլեկուկը, Ուկրաինական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Արխիվային վարչության բաժնի պետ Լ. Ա. Պրոցենկոն, Կոնֆերանսում ընթերցվեց նաև Հայկ. ՍՍՀ ԴԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, պատմության ինստի-

տուտի և Երևանի պետական համալսարանի ողջունի նամակը:

Կոնֆերանսը քննարկեց երեք զեկուցում և հինգ հաղորդում: «Լվովի պատմաբանների ավանդու ուկրաինա-հայկական պատմական կապերի հետազոտման բնագավառում» թեմայով զեկուցեց լվովի հասարակագիտական ինստիտուտի Ուկրաինայի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Մ. Կ. Իվասյուտան: Բազմաթիվ փաստերով նա ցույց տվեց ուկրաինական ժողովրդի և Ուկրաինայի հայ գաղութների բնակչության դարավոր բարեկամությունը և համատեղ պայքարը սոցիալական ու ազգային ճնշման դեմ: Ապա զեկուցողը նշեց, որ Ուկրաինայի պատմաբանները հատուկ ուշադրություն են դարձնում հայ-ուկրաինական պատմական կապերի հետազոտմանը, այդ գործում ընդգրկելով շնորհալի և փորձված գիտնականներին (Ուկր. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ի. Պ. Կրիպյակևիչ, գիտաշխատողներ Յա. Բ. Իսակևիչ, Վ. Վ. Գրաբովեցկի, Ն. Կ. Կրիվոնոս, Յա. Ռ. Դաչկևիչ, Յա. Պ. Կիս, Ե. Ա. Շաքկևիչ, Ս. Տ. Բիլեցկի, Վ. Ս. Կուլչիցկի, Ի. Գ. Կովալչակ և ուրիշներ):

Լվովի հասարակագիտական ինստիտուտի ավագ գիտական աշխատող, պատմական գիտությունների թեկնածու Յա. Դ. Իսակևիչը զեկուցեց լվովի միջնադարյան Ստավրոպոլիցիյան եղբայրության հրատարակչական գործունեության

35 «Պատմաբանասիրական հանգես», 1961, № 3—4, էջ 327:

36 ԳԱԹ արխիվ, Ֆ. Թ. Ապատյան, Բ. 12, վ. 9435:

37 Նույն տեղում, վ. 9434:

38 Նույն տեղում, վ. 9441:

և Ուկրաինայում առաջին հայերեն գրքի տպագրության մասին: Նա նշեց, որ սրանից 350 տարի առաջ Հովհաննես Քարամատանենցի սկսած և անրարենպաստ պայմանների պատճառով չժափսլված տպագրական գործունեությունը արժանի է ամենաուշադիր վերաբերմունքի: Պետք է մանրակրկիտ կերպով հետազոտել ոչ միայն XVI դարի լվովի հայկական տպարանի կարճատև պատմությունը, այլև լվովահայերի ամբողջ տպագրական գործունեությունը՝ ընդհուպ մինչև XX դարի 30—40-ական թթ., որովհետև զա կարևոր նշանակություն ունի թե՛ Ուկրաինայի և թե՛ հայ ժողովրդի մշակույթի, հատկապես մամուլի պատմության համար:

Պատմական գիտությունների թեկնածու Ն. Վ. Կրիվոնոսը, զեկուցելով Ուկր. ՍՍՀ լվովի կենտրոնական պետական պատմական արխիվի այն նյութերի և փաստաթղթերի մասին, որոնք վերաբերում են լվովահայերի XVII դ. երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական և մշակութային պայմաններին, ասաց, որ այդ պրոբլեմի ուսումնասիրության համար անհրաժեշտ բոլոր աղբյուրների դերակշռող մասը կենտրոնացված է հիշյալ արխիվում: Ապա նա կանգ առավ մի շարք կարևորագույն, դեռևս չհետազոտված փաստաթղթերի վրա, որոնք չափազանց արժեքավոր են լվովի հայ արհեստավորների գործունեության մասին պատկերացում կազմելու համար:

Այնուհետև կոնֆերանսում իրենց գիտական հաղորդումներով հանդես եկան լվովի մարզային արխիվի դիրեկտոր Գ. Ս. Սիգոնենկոն, Զեռնովիցիի պետական մարզային արխիվի գիտաշխատող Բ. Ի. Սիգորը, Ուկրաինական ՍՍՀ լվովի կենտրոնական պետական պատմական արխիվի գիտաշխատող Օ. Յա. Մացյուկը, լվովի մարզային արխիվի գիտաշխատող Վ. Ի. Շուչուկը, որոնք արխիվային տվյալներով լուսարա-

նեցին գիտության և մշակույթի առաջադեմ հայ գործիչների գործունեությունը լվովում XIX դ., լուկովինայի հայ գաղթավայրերի առաջացման պատմա-աշխարհագրական պայմանները, XVI—XVII դդ. լվովահայերի թողած փաստաթղթերի ֆիլիգրանների աղբյուրագիտական նշանակությունը, Արևմտյան Ուկրաինայում հայոց լեզվի դասավանդման պատմությունը և մի շարք այլ հետաքրքիր պրոբլեմներ:

Կոնֆերանսում ընթերցվեց ակադեմիկոս Ի. Պ. Կրիպյակևիչի «Ուկրաինա-հայկական պատմական փոխհարաբերությունների խորագնին ուսումնասիրության համար» վերնագիրը կրող զեկուցման տեքստը: Նշելով այն խոշոր գիտահետազոտական աշխատանքը, որ տարվում է երկու հանրապետությունների պատմաբանների համատեղ ջանքերով, Ի. Պ. Կրիպյակևիչը դրսևում է, որ հասել է ժամանակը, երբ առանձին, մասնավոր պրոբլեմների հետազոտությունից բացի գիտնականները պետք է առավել մեծ ուշադրություն նվիրեն հայ-ուկրաինական պատմական կապերը լուսարանող մի ամբողջական սինթետիկ աշխատություն ստեղծելու հարցին:

Կոնֆերանսի արդյունքները ամփոփեց Հայկ. ՍՍՀ պատմության ինստիտուտի սեկտորի վարիչ Վ. Ոսկանյանը: Վերջում կոնֆերանսն ընդունեց հանձնարարականներ՝ հայ-ուկրաինական պատմական կապերի ուսումնասիրության ուղղությամբ հետազոտում տարվելիք աշխատանքների մասին:

Մեծ հետաքրքրություն առաջացրեց լվովի կենտրոնական պետական արխիվի սրահներից մեկում կազմակերպված ցուցահանդեսը, որտեղ ցուցադրված էին Ուկրաինայի հայ գաղթավայրերին վերաբերող պատմական նյութերի հայեթհայեթ, լատիներեն և լեհերեն մի շարք նմուշներ:

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԱԿԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ 1 ԿՈՆԳՐԵՍՈՐ

Այս տարվա սեպտեմբերի վերջին — սեպտեմբերի սկզբին Սոֆիայում տեղի ունեցավ բալկանագետների առաջին համաշխարհային կոնգրեսը՝ նվիրված բալկանյան և Հարավ-արևելյան եվրոպայի ժողովուրդների պատմության, հնագիտության, ազգագրության, լեզվաբանության, գրականության և արվեստի պրոբլեմներին: Կոնգրեսի աշխատանքներին մասնակցում էին աշխարհի 24 երկրների շուրջ 1200 պատվիրակներ, այդ թվում հանրաժողով բալկանագետներ Վ. Գեորգիևը, Գ. Անդելովը (Բուլղարիա), Կ. Գալկովիչիովը, Ս.

Կուկուրակին (Ռումինիա), Ա. Չերազիստասը, Գ. Զակինթինոսը (Հունաստան), Մ. Գարաշին (Հարավսլավիա), Ա. Միրամբելը (Ֆրանսիա), Ա. Պերտուսին (Իտալիա), Ռ. Մալմը (Անգլիա) և շատ ուրիշներ:

Կոնգրեսի հանգիսավոր բացման ժամանակ սեպտեմբերի խոսքով հանդես եկավ Բալդարական ժողովրդական Հանրապետության Մինիստրների սովետի նախագահ Բոգոս Ժիվկովը: Նա ընդգծեց բալկանագետների համաշխարհային անդրանիկ համամոտավոր բացառիկ դիտական ու քաղաքա-